

ԼՈՒՐԵՐ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՑ

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 7—9-ը Պրագայում տեղի է ունեցել Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի միջազգային քարտուղարության նիստը, որի ընթացքում քննարկվել են այն նոր խնդիրները, որ ներկայումս դրված են ԽՀԿ-ի առաջ, որպես հետևանք միջազգային լարվածության թուլացման և ամբողջ աշխարհում խաղաղասիրական մի նոր մթնոլորտի ստեղծման:

Նիստի մասնակիցները հետաքրքրությամբ են լսել պրոֆ. Գ. Վեռների (Արևմտյան Գերմանիա) զեկուցումը «Խաղաղ գոյակցությունը և ժամանակակից աստվածաբանության խնդիրները» նյութի շուրջ:

Քարտուղարությունը ողջունել է Վիետնամի համաձայնագրի ստորագրումը և խաղաղության վերահաստատումը Հնդկաչինում, որպես հաղթանակ միջազգային համերաշխության շարժման՝ միաժամանակ նշելով, որ քրիստոնյաները պետք է հետևողականորեն շարունակեն իրենց պայքարը Մերձավոր Արևելքում արաբական երկրների և Իսրայելի միջև գոյություն ունեցող կոնֆլիկտի խաղաղ լուծման, ինչպես նաև Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում ընչազուրկ ու ճնշված ժողովուրդների ազատագրության և ռասիզմի հանցագործությունների վերացման համար:

Նիստի ընթացքում քարտուղարությունը նախապատրաստական աշխատանքներ է տարել Աշխատանքային կոմիտեի առաջիկա նստաշրջանի գումարման համար, որը տեղի է ունենալու սույն թվականի մարտի 20—23-ը Մոսկվայում:

Փետրվարի 8-ին ԽՀԿ-ի գլխավոր քարտուղար դոկտ. Կարոլի Տոթը, ի պատիվ քարտուղարության նիստին մասնակցող Խաղաղության համաշխարհային խորհրդի պատվիրակության, կազմակերպել է ընդունելություն, որին ներկա են եղել ՉՍՍՀ-ի կառավարության և Չեխոսլովակիայի էկումենիկ խորհրդի ներկայացուցիչները:

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴՈԿՏ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ռուս պրավոսլավ եկեղեցու հրավերով սույն թվականի փետրվարի 17-ին Մոսկվա է ժամանել ԵՀԽ-ի ընդհանուր քարտուղար դոկտ. Ֆիլիպ Փոթըրը, որն այդ պաշտոնին կոչվել էր 1972 թվի օգոստոսին:

Փետրվարի 19-ին դոկտ. Փոթըրին ընդունել է ռուս պրավոսլավ եկեղեցու պետ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը:

Նույն օրը Մոսկվայի պատրիարքարանի եկեղեցական արտաքին հարաբերությունների բաժինը, ի պատիվ մեծարգո հյուրի, կազմակերպել է ընդունելություն, որին ներկա են եղել բաժնի վարիչ Յուվենալի միտրոպոլիտը, ռուս բարձրաստիճան հոգևորականներ և բաժնի պատասխանատու աշխատակիցներ:

Ընդունելության ընթացքում ներկաները մեծ հետաքրքրությամբ են լսել գլխավոր քարտուղարի ելույթը «Որտե՞ղ ենք մենք և ո՞ւր ենք գնում» նյութի շուրջ:

Բացի Մոսկվայից, դոկտ. Փոթըրը միտրոպոլիտ Յուվենալիի ուղեկցությամբ եղել է նաև Տուլա քաղաքում: